Դարույր Սևակ

Անջատում

Լռություն է: Խորունկ: Խորհրդավոր:
Ամե՛ն ինչ է լռել: Եվ լռել է այնպես,
Ինչպես բառարանում բառն է լռում:
Եվ գիշերը չունի տասներկու ժամ,
Այլ կրկնակի: Խոտի թարմ բուրմունք է գալիս
Այս ասֆալտի՞ց արդյոք,
Թե՞ այս տրրամվայից,
Որ ձգվել է հիմա լուռ փողոցում՝
Ինչ-որ հեքիաթական թրթուրի պես:
Ուրեմն անջատված է հոսանքն էլեկտրական:
«Անջատվա՛ծ է»:
Այս բառն ինձ դարձրել է կշեռք
Եվ ուզում է իր ճիշտ քաշն իմանալ: Սակայն
Իմ խեղճ թվացույցին այդքան թվեր չկա՛ն...
Ո՞ւր ես: Ի՞նչ ես անում: Անջատվա՛ծ ենք:
Մագնիսական դա՛շտ կա: Անջատվա՞ծ ենք:
Խնձորն էլ են քամում - հյութը հանում միջից:
Այդպես էլ մենք ահա... անջատվա՛ծ ենք...
Ֆուտբոլասեր չեմ ես: Բայց աչքերիս դիմաց
Ինչ-որ մի գնդակ է անվերջ կաղում-խաղում:
Խենթանում են այսպե՞ս: Գնդակն ի՞նչ գործ ունի

Ի՛նձ հետ, լռությա՛ն հետ և մեր անջատմա՛ն հետ...
Եվ այս սեր կոչվածը գուցե սեր չէ բնավ,
Այլ շչակի ձայն է, կայարանի աղմուկ,
Եվ կանացի ձեռք է՝ ճյուղի նման ջարդված...
Տեսնես թե աշխարհում կա՞ գեթ մի կենտ լեզու,
Որ չունենա իր մեջ այս «անջատվել» բայը:
Թե կա՝ ես փոխում եմ ազգությո՛ւնը...
Կա՞: Պատասխան չկա: Լռություն է:
Ճիշտ է, որ պատասխան իրոք չկա,
Բայց և լռությո՛ւն չէ: Համատարած ճի՛չ է:
Համատարած կա՛նչ է: Համատարած գոռո՛ց:
Քառահատոր հսկա բառարանը հիմա
Մե՛կ բառով է լցված՝ «անջատվել»-ով:
Եվ մե՛կ միտք է հիմա մեջը գոռում-գոչում,
-Աշխարհում կա՞ արդյոք գոնե մի կե՛նտ լեզու,
Որ չունենա իր մեջ այս «անջատվել» բայը:
Թե կա՝ ես փոխում եմ ազգությո՛ւնը...

30.IX.1961թ.
Երևան